

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՐՈ ԺԱՄԽԱՐՅԱՆ, Կրթամշակութային կյանքը և հայապահպանության խնդիրները Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքներում 1920–1930-ական թթ., Երևան, ԱՀԱ պոլիգրաֆ, 2019, 180 էջ:



Հայագիտության մեջ առանձնակի կարևորություն է ներկայացնում հայկական սփյուռքի համայնքների կրթամշակութային կյանքի լուսաբանումը՝ շաղկապելով տվյալ երկրի և տարածաշրջանի զարգացումների հետ: Մասնավորապես Մերձավոր Արևելքի հայահոծ համայնքներից Սիրիայի և Լիբանանի կրթամշակութային կյանքի պատմության ուսումնասիրությունն այժմեական է, քանի որ հայերը՝ որպես ազգային փոքրամասնություն, մշտապես վայելել են արաբ ժողովրդի հյուրընկալությունը, հարգանքն ու վստահությունը: Այս երկրներում տասնամյակներ շարունակ Հայ եկեղեցու կողքին

հայ դպրոցի կարևորագույն առաքելությունը եղել է հայոց լեզուն որպես հաղորդակցության, մշակույթի, կրթության ու գիտության բնական ու ճկուն միջոց ներկայացնելը:

Արդ, ընթերցող հանրության սեղանին է դրված երիտասարդ հետազոտող, պատմ. գիտ. թեկնածու Կարո Աղվանի Ժամխարյանի (1986-2016) «Կրթամշակութային կյանքը և հայապահպանության խնդիրները Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքներում 1920–1930-ական թթ.» խորագրով ուսումնասիրությունը: Այն հեղինակի՝ 2015 թ. իբրև ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի հայցորդ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի մասնագիտական խորհրդում պաշտպանած թեկնածուական ատենախոսության վերամշակված տարբերակն է, որի տպագրված օրինակը նա, ավա՛ր, չտեսավ:

Սույն գրքի լույս աշխարհ գալը հարգանքի տուրք է երիտասարդ պատմաբանի հիշատակին: Աշխատանքը խնամքով, ամենայն բարեխղճությամբ ու նվիրումով հրատարակության է պատրաստել նրա կինը՝ Էթերի Մամուլյանը:

Գրքի խմբագիրը պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Էդիկ Գևորգյանն է, գրախոսը՝ պատմ. գիտ. թեկնածու Անի Ֆիշենկճյանը: Գիրքը հրատարակության է երաշխավորել Պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը:

Սույն մենագրությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, վերջաբանից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, անգլերեն և ռուսերեն ամփոփումներից:

Առաջին գլուխը նվիրված է Հայոց ցեղասպանությանը հաջորդող ժամանակահատվածում Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքների ձևավորմանն ու հայապահպան առաքելության կազմակերպմանը, այս ասպարեզում Հայ առաքելական, կաթոլիկ և ավետարանչական եկեղեցիների, ավանդական երեք կուսակցությունների ու կազմակերպությունների գործունեությանը: Հեղինակն առաջնակարգ ուշադրություն է հատկացնում հայկական համայնքների ժողովրդագրական նկարագրին, հայերի տեղաբաշխմանն ու թվաքանակին, որբանոցների հիմնադրմանը, կրթական գործի կազմակերպման բնագավառում վերջիններիս ունեցած նպաստին: Փաստական նյութի համակողմանի օգտագործմամբ, նա ցույց է տալիս, որ հայոց լեզվի, ավանդական ընտանիքի մոդելի և հայ հարանվանական եկեղեցիների պահպանումը նպաստեց կրթամշակութային գործի սկզբնավորմանն ու ծավալմանը: Հայկական ազգային վարժարաններում դասավանդումն իրականացվում էր հայերենով, իսկ թուրքերենն այլևս չէր կիրառվում: Սա նպաստեց մանուկների և պատանիների հայեցի դաստիարակությանը, ազգային մտածելակերպի ձևավորմանը, դրանց շնորհիվ նաև այդ երկրներում հայապահպանության կազմակերպմանը: Չեզոքացվեց խառնամուսնությունների վտանգը:

Երկրորդ գլխում անդրադարձ է կատարվում կրթական գործի կազմակերպմանը: Ցույց է տրվում այս խնդրում դպրոցական, արհեստագործական, մարմնակրթական, հոգևոր կրթության դերը, այդ ուղղվածության կրթական հաստատությունների գործունեությունը: Հատուկ անդրադարձ է կատարվում Սիրիայում և Լիբանանում գործող Հայ առաքելական, ավետարանչական, կաթոլիկ վարժարաններին (այդ թվում՝ կիրակնօրյա դպրոցներին), դրանց ունեցած խնդիրներին՝ կրթական միասնական ծրագրի բացակայությանը, մասնագետ ուսուցիչների պակասին, դասագրքերին, վարժարանների շենքային պայմաններին, դրանք կարգավորելուն ուղղված ջանքերին:

Վերջին գլխում քննության են ենթարկվում համայնքների մշակութային կյանքին վերաբերող խնդիրները: Հեղինակը առանձին-առանձին անդրադառնում է թատերական, գրական կյանքին, պարբերական մամուլին, համոզիչ կերպով ցույց տալիս վերջինների անգնահատելի դերը Սիրիայի և Լիբա-

նանի հայկական համայնքների կազմակերպման և հայապահպան առաքելության իրականացման ասպարեզում: Խոսելով թատերական կյանքի մասին՝ նա նշում է, որ խնդրո առարկա համայնքների ձևավորման օրերին թատերական ներկայացումները տեղի էին ունենում թիթեղաշեն, փայտաշեն կացարաններում և վրաններում, հայկական թատերասրահներ չկային: Հաճախ առանձին խմբեր են գործել որբանոցներում: Սփյուռքի պայմաններում հեղինակն առանձնակի կարևորում է մամուլի և գրականության դերը հայապահպանության գործում: Նա թվարկում է Սիրիայում և Լիբանանում 1920-ական թվականներից կուսակցությունների, միությունների և հարանվանությունների կողմից հրատարակվող պարբերականներն ու անդրադառնում նրանց ուղղվածությանը: Սփյուռքահայ գրականությունը, տվյալ համայնքներում, սկիզբ է առել որբանոցներում՝ արտացոլելով որբերի անցած ճանապարհը, նկարագրելով նրանց տեսած ցավը, ցասումը, կարոտը, հայրենի տան վերադարձի հույսը և այլն: Հեղինակն արխիվային փաստաթղթերի, հուշագրությունների և մամուլի տեղեկությունների հիման վրա հստակ ցույց է տալիս, որ Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքների կազմակերպման գործը դյուրին չի եղել: Բայց և այնպես կրթության և մշակութային փոխկապակցվածությունը նպաստել է հայապահպանմանն ու թատերական-գրական կյանքի հետագա զարգացմանը:

Աշխատանքի արժանիքների զգալի մասը պայմանավորված է հեղինակի օգտագործած մեծաքանակ աղբյուրագիտական նյութով՝ Հայաստանի ազգային արխիվի և Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի ֆոնդերում պահվող արխիվային փաստաթղթեր, հրատարակված աղբյուրներ, հայաստանյան և սփյուռքյան մամուլ, հուշագրություններ, բազմաբնույթ ուսումնասիրություններ: Ցավոք, Կ. Ժամխարյանը հնարավորություն չի ունեցել օգտվելու Լիբանանում և Սիրիայում պահվող արխիվային վավերագրերից:

Ընդգծենք, որ սույն աշխատությունը միանգամայն նոր, թարմ խոսք է սփյուռքահայ համայնքների կրթամշակութային կյանքի ուսումնասիրության բնագավառում: Այն հարուստ է աղբյուրագիտական մեծաքանակ ու բազմազան նյութով, աչքի է ընկնում սահուն, դյուրընթեռնելի շարադրանքով, դրանից բխող գիտական ընդհանրացումներով ու կուռ եզրակացություններով: Կարծում ենք՝ Կարո Ժամխարյանի սույն մենագրությունը փնտրված գիրք կլինի Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքների պատմությամբ հետաքրքրվող հայագետների և ընթերցասեր հանրության համար:

ՎԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու
ԱՆԻ ՖԻՇԵՆԿՃՅԱՆ